Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՕԳՈՍՏՈՍ 15 1893 ԹԻՒ 15

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

Հայկական յուզմունք նոր շրջանի մի մէջ մտան։

Հինգ անմեղ Հայեր գլխատուեր են ի ձեռն Թուրք կառավարութեան՝ ի հեռուկս ջանից անգլիական դեսպանին ի Կ. Պոլիս։ Թէև ստոյգ լուր չկայ մանրամասնութեանց նկատմամբ, հաւանական կ'երևի թէ մեռցուածներուն մէջ լինին Անտոն Ռիշտունի, Յ. Պահլաւունի և Դանիէլ վարդապետ։

Բ. Դուռն մահու օրինական պատիժ տալով հայ յուզիչներու, մեծագոյն կարեւորութիւն տուած եղաւ Հայկական խնդրոյն։ Քրդաց և գաւառական պաշտօնէից ձեռօք լռեցուցնել չկրնալով հայոց աղաղակն, հարկ համարած է փատիչահն որ ուղղակի իւր հրամանաւ հինգ Հայեր խեղդուին և այսպէս Հայոց արդար բողոքոյ ձայնն խեղդուի։ Ի՞նչ ձախող Քաղաքականութիւն։ Առաւել քան երբէք բարձրագոչ կը լսուի քրիստոնեայ աշխարհի մէկ ծայրէն ցմիւսն այն ահագին աղաղակ որ կը բարձրանայ անմեղ նահատակաց անշնչացեալ դիակներէն։

Շատ զոհեր տուինք բանտերու մթին անկեանց մէջ, աշխարհ չիմացաւ։ Զոհ եմք որ մեր զոհեր այժմ հրապարակաւ կը մատուցուին արդարութեան դատին և աշխարհ կը տեսնէ։

Քաղաքակիրթ աշխարհի մէջ հայասիրական հոսանքն ահագին աճումն առած է վերջերս։ Քաջալերուեցէ՛ք, հա՛յ հայրենասէրք։

*

* *

Հայ բանտարկելոց ցանկն, հանդերձ իւրաքանչիւրի տարիքովն ու գործով, զոր հրատարակեցինք մեր նախորդ թուով, նոցա բողոքագրոյ պատճէնին կից էր, բանտին մէջ պատրաստուած։

*

* *

Ներկայ թուով ուրախութեամբ կը հրատարակեմք Ե. ուսումնասիրութիւնն Ազգային Քաղաքականութեան։ Սոյն յօդուած յղուած է մեզ յոյժ ուսեալ և բանիմաց ազգայնոյ մի կողմէն, զորոյ անուն եւս լռել մեզ պատուիրուած է։

*

* *

Հաւանական հաշուով Վեհ. Կաթողիկոսն ցարդ մեկնած պիտի լինի յԵրուսաղէմէ։ Յուլիս 26ին Փարիզէն կը գրեն մեզ թէ քաղաքին հայ գաղթականք երկու պատգամաւոր պիտի յղեն ընդ առաջ Հայրիկին ի Վիէննա։

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 փրանք կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի ինքնօրինութիւնն. տեսութիւն Գոռոյ.— Նամակ Կ. Պոլսէ.— Ամերիկայի Հայոց երկու խօսք, Հայրենիք վերադառնալու մասին.— Տեղեկագիր սոսկալի հարստահարութեանց. Նամակ Ցափանց Եփրատայ.— Ազգային, Քաղաքական և զանազան լուրեր։

Կը խնդրեմք որ մրնի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց
Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Լոնտոնեան Ս.ռմէնին յառաջիկայ Նոյեմբերէն սկսեալ պիտի հրատարակուի անգլիերէն և Փռանսերէն զատ զատ, այնպէս որ փափաքողք պիտի կրնան բաժանորդ գըրուիլ միոյն կամ միւսոյն ըստ հաճոյս։ Տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ։ Տէր Ջերազ խմբագարապետն ներկայ ամսոյ վերջերն յԱմերիկայ պիտի գայ Շիքակոյի Կրօնական Համաժողովոյն մէջ Հայ Եկեղեցւոյ վերայ ճառախօսելու համար։

***

Հրաւէր կը կարդամք Ամերիկայի ստուար հայ գաղթականութեանց որ ջանան մաս միթինկներ կազմել և Ամերիկացւոց կարծիքն յուզել ի նպաստ ամերիկեան քաղաքացութեան ընդունուած այն Հայոց որ ի Թուրքիա չեն վայելեր ամերիկեան դիւանագիտաց պաշտպանութիւնն։ Ամերիկացւոց համար պէտք է անել այդ ժողովներ, ուր առենախօսք անգլիերէն խօսելով ցուցնեն, եղելութիւններ ի ձեռին, թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն թերացած է արժանապատուութենէ։

***

Մեծ գոհութեամբ կարդացինք Վիէննայի Մխիթարեան «Հանդէս»ին մէջ Հայ Լրագրութեան հարիւրամեայ դարեդարձըն տօնելու առաջարկն։ Այդ մասին պիտի խօսիմք մեր յաջորդ թուով։

***

Շնորհակալութեամբ ստացանք Հ Գրիգորիս Վ. Գալէմքեարեանի աշխատութեան Ա. հատորն— ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ (1794-1860) տպեալ ի Վիէննա, Գին երկու փրանք և կէս, (կամ 50 սէնթ)

***

Ցայսօր երեք յօդուած ընդունած եմք «Թէ ինչու Հնչակեան եմ ես» խորագրով, ըստ մեր հրատարակեալ առաջարկի։ Սոցա ոչ մին յոռի գրուած է, բայց կը թուի թէ Հնչակեան Կուսակցութեան ի նպաստ աւելի զօրաւոր եւ իմաստալից դաւանանք մի կրնայ գրուիլ, ուստի և կը սպասեմք ձեռնհասագոյնից գրութեան։

Ուրիշ կուսակցութեան ի նպաստ գըրութիւն չհասաւ դեռ մեզ։ Ջեմք ալ զարմանար այս միջոցին։

Ե. Ուսումնասիրութիւն
Ազգային Քաղաքականութեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՈՌՈՑ

Մեծայարգ խմբագրապետ,

Անբացատրելի խնդութեամբ այս օրերս ձեր լրագրոյն էջերն ազգին կենսական խնդրովն լեցուն կը գտնեմ։ Այդ յօդուածներու տպաւորութիւնն ընթերցողաց վրայ նման է այն յուսոյն ու մխիթարութեան զորս թշուառ հիւանդի այցելող ճարտար բժիշկն կը ներշնչէ։ Ես ալ ընթերցողացդ մխիթարուած և յուսառու դառնալս կը վերաբերիմ և կուգամ իմ ուրախութիւնս յայտնել ու միանգամայն խնդրոյն օգնութիւն մ'ընելու համար (եթէ կարող եմ ընել՝) մի քանի խորհրդածութեանց տեղ խնդրել «Հայքի» թանկ էջերուն մէջ։

Իմ նիւթս պիտի ըլլայ համառօտիւ ցուցնել թէ հայկական ինքնօրինութիւնն հարկաւոր է և հնարաւոր, և թէ զայն ձեռք բերելու համար ինչ միջոցներ կան։

Ա. ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս գլխոյն վրայ շատ խօսելու պէտք չեմ տեսներ, որովհետև ձեր կողմանէ արդէն շատ պարզ և շատ ճշմարիտ կերպով ճառուած է այն։ Թուրքն իբրեւ մահմետական չկրնար իւր քրիստոնեայ հպատակաց բարօրութեան և յառաջդիմութեան և ազատութեան բաղձալ, մինչեւ անգամ չի կրնար ներել։ Օսմանցին նայած է և պիտի նայի այսուհետև ալ հայ ժողովրդին ոչ իբրեւ յարգելի հպատակաց և խնամելի հօտի այլ իբրեւ որսի զոր ուտել է արժան։ Քրիստոնեայ հպատակներն խնամելով և հոգալով պահպանելու գաղափարն այնքան անխորհելի է օսմանցւոց որ չարաչար վարմամբ զՊուլկարիա և զայլս կորուսանելէ յետոյ իսկ չեն կրցած վայրկեան մի զգաստանալ և գոնէ կասկածիլ թէ գուցէ ժողովրդոց տիրելու կերպն այդ չէ։ Պատմութենէն բնաւ դաս չեն առած, և այսօր Հայոց հետ վարուելու բռնաւոր և անիրաւ եղանակէն կը հասկցուի թէ իրենց կարծեօք միւս ժողովուրդներն ձեռքէ հաներ են այնու զի բաւական ճնշած և զարհուրեցուցած չեն։ Միւսներն որպէս թէ պատ ծակելով բանտէն փախած էին, ուստի Հայոց շուրջն աւելի թանձր պատ պէտք է քաշել։

Այս ընթացիք Օսմանցիք հայ ժողովուրդն ալ ձեռքէ պիտի փախցուցնեն, և դարձեալ առանց զգօնանալու։ Օսմանցւոց անուղղելի ապշութենէն կրեցինք վշտեր ու պիտի վայելենք ազատութիւն։ Շինենք ուրեմն մեր ծրագիրն ու ընտրենք մեր շաւիղն այս հասկացողութեամբ թէ ոեէ սուղ գնով պէտք է ճգնինք ազատիլ օսմանեան բռնապետութեան լծէն և լինիլ ինքնօրէն։

Բ. ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Հայկական ինքնօրինութեան հնարաւորութիւնն դատելու համար երկու բան ունինք ի հաշիւ առնուլ, նախ թէ Եւրոպա կը հաւանի՞ այդմ, և երկրորդ թէ Հայք պատրաստ և արժանի՞ են։

Առաջին կետին վերաբերութեամբ, սա կ'ըսեմ թէ Թուրքիոյ այս խռովութեանց և ցնցմանց վերջ տալու և զայն քաղաքակրթութեան շաւղին մէջ մուծանելու ուրիշ աւելի բանաւոր եղանակ չի կայ քան տալ Հայոց ինքնօրինութիւն։

Փոխանակ այսր կրնան միտք դալ սա հետեւեալ կերպերն ալ, որոց ոչ մին՝ սակայն՝ այնքան բանաւոր ու գործնական է որքան Հայկական ինքնօրինութիւնն։

1. Այն հսկողութիւնն զոր Պէրլինի դաշնագրոյն զօրութեամբ Եւրոպա ի գործ դնելու իրաւունք ունի Թուրքիոյ վերայ, աւելի կորովով կամ խստութեամբ ի գործ դնել և հսկողութեան կոդրոնն երկրին աւելի ներսերն ընել։ Այս միջոցին դէմ կան արգելքներ։ Դաշնագրող պետութեանց որո՞ւն պիտի յանձնուի մօտէն հսկելու պաշտօնն։ Որուն որ յանձնուի, նա Թուրքիոյ մէջ մեծագոյն ազդեցութեան և արտօնութեան տէր եղած կ'ըլլայ, ուստի և իւրաքանչիւրն պիտի ուզէ այդ օգտաբեր պաշտօն իւր վրայ առնուլ։ Ռուսիա կրնայ ըսել թէ ներկայ դժուարութիւնն Հայոց համար լինելով գլխաւորապէս և անոնց մեծամասնութիւնն իրեն մօտիկ գտնուելով՝ շատ արժան ու իրաւ է որ իրեն յանձնուի հսկողի պաշտօնն։ Ֆռանսա կրնայ ըսել թէ Սիւրիա և Կիլի-

կիա լաւ կեդրոններ են և ինքն արդէն այն կողմեր շատ համակրանք և ազդեցութիւն կը վայելէ, և յեգիպտոս կրած կորուստին փոխարինութիւն մը լինելու նկատողութեամբ ևս իդէպ է որ ինքն ըլլայ հսկող։ Անդիէն Անդլիա կրնայ պնդել թէ կառավարութեան կեդրոնն Կ. Պոլիս ըլլալով հսկողութեան կեդրոնն ալ անդամ անոր մօտ ըլլալու է, և միթէ հա՞րկ է որ ապացուցանէ թէ ինքն է յարմարագոյն տէրութիւնն որ կրնայ ստանձնել վերատեսչութեան պաշտօնն։

Առանց քննելու թէ այդպիսի մասնաւոր հսկողութեան մը արդիւնքը ինչ կրնայ լինիլ, կը տեսնենք թէ այդպիսի հսկողութիւն մը հաստատելու մասին յայտնի և ծանրակշիռ արգելքներ կան։

2. Միւս կերպն որ կրնայ մտածուիլ, է դաշնագիրն ստորագրած տէրութեանց միաբան հսկողութիւնն, որով կը վերնայ ղեկին որո՞ւ ձեռքն տրուելու դժուարութիւնն, բայց այն ատեն ալ պիտի սկսին իրարու վրայ հսկել մի գուցէ մին ստանայ գերակշիռ ազդեցութիւն։ Նաև շատ վախ կայ որ այդպիսի միաբան հսկողութիւն մի չուտով իջնէ այն թոյլ և անհոգ աստիճանին ուր այժմ կը գտնուին այդ տէրութեանց ներկայացուցիչք ի մասին Հայոց խնդրոյն։

3. Վերջին կերպն է իւրաքանչիւր մեծ տէրութեան յանձնել Թուրքիոյ մէկ մասին բարեկարգութեան գործն։ այդ արմատական եղանակ ազդու կրնայ լինիլ բայց առ այժմ գործնական չէ։ Արեւելեան խնդիրն գրեթէ անուշութեամբ լուծել պիտի ըլլար այդ, ինչ որ կ'երևի թէ սուրն վերջապէս պիտի լուծէ։ Նաև յաւելունք թէ դէշ կերպով լուծել պիտի լինէր այդ, զի Թուրքիա ջնջել կը լինէր ոչ թէ փրկել։ Աւազի մէջ խրեալ նաւն աւազէն հանելու փոխանակ, զայն կտոր կտոր ընելով իրենց մէջ բաշխած պիտի լինէին օգնութեան հասնողք։

Բաց այսի, զԹուրքիա այդ կերպով բաժնել դիւրին չէ։ Աշխարհագրական բաժանում կրնայ դիւրին ըլլալ, բայց գործնական չէ։ Բաժանումն եթէ հնար է միայն կրօնական և ցեղային բաժանմամբ հնար է։ Եւ այս ալ զմեզ նորէն կը վերադարձունէ մեր առաջի առաջարկութեանն, այսինքն թէ պէտք է որ Հայաստան առանձին ինքնօրէն նահանգ լինի իբրեւ Հայ քրիստոնէից կեդրոնն ու հայրենիքն։ Այդպէս Հայաստան քրիստոնեայ կառավարութեամբ կը զօրանայ, կը բարգաւաճի և ամբողջ պետութեան վերանորոգմանն ու վերակենդանութեան ներքին կեդրոն մի կը դառնայ։

Գանք այժմ միւս առարկութեան։ Հայերն ինքնօրէն լինելու ընդունա՞կ են, արժանի՞ ունի՞ն արդեօք։ Հայաստան վերակենդանութեան աղբիւր կրնա՞յ ըլլալ Թուրքիոյ համար։

Այս առարկութիւն արդէն եղած է և դեռ շատ անգամ կրնայ յառաջ բերուիլ հակառակորդաց կողմանէ, ուստի արժան է որ այդ մասին ալ վայրիկ մի մտածենք։

Հայոց անցելոյն և ներկային վրայ կարի ծանծաղ և անկատար տեղեկութիւն ունեցողներն կամ պարզ թշնամի՛ք միայն կրնան ըսել թէ Հայք կարողութիւն չունին ինքնօրէն կեանքի։

Առարկուք կը թուին անգիտանալ թէ հայն չէ այն ցեղերէն որք երբէք ազգութեան վիճակի հասած չեն։ Հայք ունեցած են արդէն տէրութիւն, զօրութիւն, բանակ, օրէնք և կարգ ու կանոն։ Ճիշդ ինչպէս ընտանեկան այնպէս և ազգային շրջանակի մէջ ժառանգականութեան օրէնքն հզօր է։ Հայք չտես չեն։ Իշխանութիւն վայելած են և կրնան այսօր ալ վայելել արժանապէս։

Հայոց ներկայ վիճակն ալ փայլուն ապացոյցներ կ'ընծայէ աշխարհի թէ յառաջդիմական ցեղ մ'է։ Դիտեցէք թէ ի՛նչ մեծ կրթական շարժում ըրած է Հայ ժողովուրդն թէ՛ ի Թուրքիա և թէ ի Ռուսիա վերջին 50 տարուան մէջ։ Եթէ ըրած է զայն ի հեռուկս արտաքին արգելքներու, մանաւանդ ի Թուրքիա, ի հեռուկս ազգատութեան և ամենակերպ խոչնդոտներու։ Ամեն տեսակ դպրոց հաստատած է, և յետին գիւղերուն մէջ ալ ուսման լոյսն նշողել սկսած է։ Ուշիմ երիտասարդներ անխոնջ աշխատութեամբ և անդուլ ուսումնասիրութեամբ իրենք զիրենք կրթած ու բարձրացուցած են ի վերքան զմիջնակարգ վարժարաններն ուր իրենց ուսմանց հիմունքն դրուած էին։ Ոմանք ալ յաղթելով նիւթական դժուարութեանց՝ գնացեր են յԵւրոպա կամ յԱմերիկա և բարձրագոյն ուսմամբք պարարած են իրենց մտքեր։ Մէկէ աւելի հայ

ուսուցչապետներ ունինք այսօր Եւրոպական համալսարանաց մէջ։ Ասոր կից յիշենք նաև Հայոց դիւանագիտական և քաղաքագիտական փայլուն փորձերն։ Ի Թուրքիա, ի Ռուսիա, ի Պարսկաստան և յԵգիպտոս բարձրագոյն կարգի դիւանագիտական պաշտօնեաներ յարուցած է հայ ժողովուրդն իւր ծոցէն։ Այս ամենն նկատել և դեռ պնդել թէ Հայք իրենք զիրենք կառավարել և յառաջ երթալ չեն կարող՝ պարզ տգիտութիւն է կամ թշնամութիւն։

ՄԻՋՈՑՔ

Թէ հարկ և արժան է որ Հայաստան ինքնօրէն լինի զայն համառօտիւ պարզեցինք. այժմ արժան է որ միջոցներու խնդիրն ալ քննենք։ Ինքնօրինութիւն ձեռք բերելու լաւագոյն և գործնական հնարքներուն վերայ միտք յոգնեցունել պէտք է և խնդրոյն այդ մասն է որ բաղդատաբար քիչ քննուած և մշակուած է։

Սովորական դարձած այն բաժանումն որ միջոցներն արտաքին և ներքին աշխատութեան կը բաժնէ, լաւ է, և մեք կըրնամք նախ խօսիլ թէ ինչպէս կարելի է ստանալ այն արտաքին օգնութիւնն որուն կարօտ ենք։

Արտաքին օգնութիւն ըսելով կը հասկնանք եւրոպական տէրութեանց հաւանութիւնն Հայաստանի ինքնօրէն լինելուն և, առ այդ կարելի եղած ձեռնտուութիւնն ընելն։ Թէ որքան անհրաժեշտ է Եւրոպայի հաւանութիւնն, զայն կրնանք կատարելապէս ըմբռնել եթէ վայրկեան մը մտածենք որ եթէ այսօր Հայաստան պատրաստ լինէր և Բ. Դուռն կամայ ակամայ յօժարէր ինքնօրինութիւն տալ նմա, չի պիտի կրնար տալ առանց եւրոպայի հաւանութեան։ Արևելեան խնդրոյն մէջ մեծ շահ ունեցող տէրութիւններն մանաւանդ պիտի տեսնէին յայդմ նոյն խնդրոյն լուծման մէկ ազդու սկզբնաւորութիւնն, որոյ հեռահաս և յարաճուն հետևանօք կարելի է Արևելից առնուլ անակնկալ կերպարան։

Բ. Դուռն թող մեկնէ ինչպէս որ կամի Պէռլինի դաշնագիրն, թող համարի զայն իւր ազգային երաշխաւորութիւն, իւր ամբողջութեան դրաւական, այսու ամենայնիւ սա ալ յայտնի է թէ այդ դաշնագրով Թուրքն իւր աղատութիւնն ըստ մասին Եւրոպայի գերիշխանութեան ենթարկած է։ Թուրքն իւր գործ չգիտցող և իւր հարստութիւն գործածելու բաւական խելք չունեցող անչափահաս կամ տըկարամիտ մէկուն պէս է, Եւրոպայի պաշտպանութեան և միանգամայն մեծաւորութեան ենթարկուած է, և չի՛ կրնար իւր երկրին մէկ մասն ուրիշին տալ կամ ուրիշ մէկ մասին ինքնօրինութիւն շնորհել առանց թեւարկու տէրութեանց հաւանութեանն։

Ոչ թէ մէկ այլ ոչ սակաւ տէրութեանց յօժարութիւնն պարտինք ստանալ, որոց մէն միոյն հաշիւն տարբեր է կամ իրարու հակառակ. վասն որոյ և այդ ամեն հաշիւներուն մէջտեղէն մեր ճամբան գտնել և դէպ ի մեր նպատակակետն հասնիլ՝ կը պահանջէ շատ խելք, շատ ջանք և շատ գիւանագիտութիւն, ինչպէս նաև բազում դրամ և անձնուիրութիւն։ Ուրեմն մեր գործն յոյժ յոյժ փափուկ և դժուար է ինչպէս կարի մեծ և կենսական։

Այս մեծ ազգային գործոյն յաջողութեան պայմաններուն համաձայն յառաջ տարուելուն ինչ միջոց կայ։ Ըստ մեզ մի վարչութիւն կազմաւորել և անոր ձեռքն յանձնել պարտ է այս մեծ գործոյն ղեկավարութիւնն, վարչութիւն մը որոյ թիկունքն լինի ամբողջ ազգն։ Վարչութիւնն, եօթն կամ ինն անդամներէ բաղկացեալ, ունենայ կայան մը յԱնգլիա կամ ի Փարիզ, և աշխատի Հայկական ինքնօրինութեան գաղափարն Եւրոպական ազգաց հնարաւոր և ընդունելի ցուցնել։ Այդպիսի մարմին մը կարող պիտի լինի փութով օգտիլ այն ամեն բարեպատեհ առիթներէն զոր ժամանակն ու բաղդն, առ այսպէս ասել, կրնան ընծայել յանկարծ.— դիտել միշտ եւրոպական քաղաքականութեան ջերմաչափն և ըստ այնմ շարժիլ ու շարժել.— ծրագրել Հայաստանի պահանջեալ ինքնօրինութեան հանգամանքն,— հայ ազգին անյօդ մռնչմանց և հեծեծանաց տալ բարբառ և բանաւոր իմաստ առաջի եւրոպական ժողովրդոց. — միանգամայն Հայոց ներքին գործոց և աշխատութեանց տալ սիրտ և ներշնչել իմաստուն ուղղութիւն՝ համաձայն արտաքին քաղաքականութեան և միջազգային կացութեան։ Ի մի բան,

այդ վարչական կեդրոն մեծ գործն կը գործէ ու գործել կուտայ ազգին ու աշխարհին։

Մեզ յոյժ կարեւոր կերեւի այդպիսի մարմին մը։ Եթէ Եւրոպիոյ հաւանութեամբ և օգնութեամբ պիտի ստանանք ինքնօրինութիւն,— և ասոր տարակոյս չկայ։— հարկ է որ առ այս մասնաւոր և ազգու ջանքեր ի գործ դնենք։ Ազգին առ այս այժմու ընթացքն անբաւական է։ Թէ արտաքին գործոց պաշտօնարան մը հարկ է մեզ, այնմ ամեն բանիմաց անհատ համոզուած պէտք է ըլլայ։ Պէռլինի դաշնագրոյն 61դ յօդուածին գոյութեան օրէն ի վեր մեզի արտաքին գործոց պաշտօնէութեան առիթ և պատեհութիւն ծագած է։ Այնքան իրաւունք ունինք պետութեանց խօսելու որքան Թուրք կառավարութեան։ Պատրիարքարանին անկ էր ընել այս կրկին աշխատութիւն, սակայն ամեն մարդ գիտէ թէ պատրիարքական իրաւասութիւնք այժմ ջնջուած են։ Պատրիարք ոչ եւրոպային կրնայ խօսիլ և ոչ Բ. դրան։ Խօսիլ յանցանք է նմա՝ ոչ թէ պարտաւորութիւն։ Ուրեմն պէտք կայ ուրիշ պատրիարքարան մը ստեղծելու, որոյ կեդրոնն ըլլայ Եւրոպիոյ մայրաքաղաքացին։ Այո՛, այդ է խնդիրն—թէ արժա՞ն է թողուլ ազգն առանց պաշտօնական գլխոյ այժմ երբ առաւել քան երբէք կարօտութիւն կայ այնմ։ Պատրիարքարանն իւր դարաւոր գոյութեան ընթացքին մէջ երբէք ունեցա՞ծ է այնքան կարեւոր և մեծ գործ քան զայն որ այսօր կը ծանրանայ իւր վրայ։ և սակայն երբէք եղա՞ծ էր նա այնքան կաշկանդուած և անզօր որքան ի ներկայիս։ Մենք համոզուած ենք թէ Տաճկաստանէն դուրս ազգային վարչութիւն մը հաստատել անհրաժեշտ հարկ է և կենսական կարեւորութիւն ունեցող խնդիր մը որուն կարգադրութեանն պէտք է աշխատի ամեն խելահաս և հայրենասէր հայ։ Եւ այսպիսի վարչութիւն մի յօրինել այս կամ այն անձին գործը չէ, ազգի՛ն գործն է։ Ազգն ինքնին այս բանին զհետ պէտք է ըլլայ, այսինքն ազգին խորհող և զգայուն դասն — այն դասն որ կը հասկնայ թէ մեծ գործերն մեծ խելքով և կանոնաւոր գործիներով կրնայ ի կատար հասնիլ։

Զարմանալի՛ բան։ Եթէ Բ. Դուռն յանկարծ հրովարտակ հանէր թէ այլ ևս Հայոց պատրիարք և վարչութիւն չճանաչեր և չուզեր, ժողովուրդն մեծ աղմուկ և յուզմունք պիտի հանէր։ Սակայն Օսմանցին յաճախ քան զմեզ ճարտարութեամբ կը գործէ։ և այս առթիւ ալնոյնպէս գտնուեցաւ։ Պատրիարքութիւնն ու ազգային վարչութիւնն ոսնացուց, փճացուց, միայն արտաքին փեճեկն, կեղեւն թողուց, և մեք տակաւին չենք հասկնար, և չենք փութար ազատ հողի վրայ ազգային կեդրոն մը ստեղծելու։

Սխալ չհասկցուի մեր միտքն։ Ազգին գործն է հայկական ինքնօրինութիւն ըստանալ։ և զայդ ստանալ աշխատելու համար քանի որ Պոլսոյ պատրիարքարանն փճացած է, մանաւանդ թէ արգելք դարձած է, թողունք որ Թուրքն փեճեկին հետ խաղայ, իսկ մենք մեր գործն գործելու համար ազգային գործիչներու կեդրոն մը, ազգային Պատրիարքարան մը ստեղծենք յեւրոպա։ Մի ըսէք թէ այդ ըլլալու բան չէ։ Շատ ձախող կարծիք է այդպէս ըսել։ Եթէ վաղը ինքնօրէն ազգ ըլլալու կարող ենք ի Թուրքիա, պէտք է որ այսօր ալ կարող լինինք վարչական կեդրոն մը հաստատել յեւրոպա։

Դիտելի է թէ այս առաջարկութիւն ոչ նոր է և ոչ ալ գործադրութենէ չափազանց հեռու։ Բնականօրէն, իրաց բերմամբ, արդէն նախապատրաստութիւններ կատարուած են։ Այդպիսի վարչութեան մը նիւթ պատրաստուելու վրայ է եղած է ժամանակն։ Փոքրիկ նախատիպն ալ կրնանք ըսել թէ տեսնուած է, և օգուտներն ալ տեսնուած։ Հայրենասէր Գործիչներ այլ և այլ ընկերակցութեանց ձեռնտուութեամբ շատ գործ գործած են յարտասահմանի։ Անոնց իրաքանչիւրին խորին շնորհակալութիւն կը պարտինք։ Նոքա աւելի ծառայութիւն մատուցած են ազգային դատին քան պատրիարքարանն վերջին տասն ամաց մէջ։ Ինչո՞ւ ուրեմն քայլ մ'եւս չառնունք այս արտասահմանեան պատրաստ նիւթերն կատարեալ կազմաւորման վիճակի վերածելու համար։ Եթէ ժողովուրդն քիչ մի քաջալերէ և յորդորէ, այդ ծանօթ անձնուէր անհաս գործիչներ կրնան միաբանօրէն գործել և մի մեծ մարմին յօրինել փոխանակ զատ զատ գործելու։ Դոցա Միութենէն յառաջ պիտի գայ ազգեցութեան և զօրութեան ահագին ամուսն, որ չուտով պաշտօնական հանգամանք պիտի զգենու։

Ազգ մը գերութեան լուծէն ազատել դիւրին գործ չկարծենք։ Ազատութիւնն ձեռք բերել ահագին և վիթխարի դըժուարութեանց յաղթելու գործն է։ Ուրեմն քաջ և խոհեմ և անվհատ աշխատինք։

ԳՈՌ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 18 Յուլիս 1893

Բարեկամ,

Փատիշահն արդէն դժգոհ էր իւր հայ հպատակներէն որք իւր կառավարութեան կերպէն կը դժգոհէին, բայց վերջերս իւր սրտմտութիւն այրիչ բարկութեան աստիճանին հասաւ, քանզի դժգոհ լինելու յանցանքին վերայ դժգոհ երևնալու ոճիրն ալ կը գործեն։ Հայերն կը մեղանչեն խորհրդով, բանիւ և գործով։ Եւ երբ մեղաւորի պատժոյ կ'ենթարկուին, աշխարհի ականջն կը խլացունեն իրենց աղաղակներով։ Ամօ՜թ։ Ալ մարդ բանտարկուած, շղթայուած, չարչարուած չունի՞ր միթէ յառաջագոյն։ Քսան տեսակ տանջանք բաշխուած է եղեր հայ բանտարկելոց, միթէ չա՞տ է։ Եւ միթէ կարելի չէ՞ր քսակ տեսակ տանջանքն իբրև քսան տեսակ կերակուր անոյշ անել հայրախնամ կայսեր անոյշ սիրուն համար։ Այն առջի օրհնեալ ժամանակաց երախտագէտ Հայերն չեն մնացեր, աւա՜ղ. Նոքա պիտի փութային շնորհակալութեան ուղերձ մի, ոչ թէ գանգատ, ուղղել Նմին վեհափառութեան և առել թէ հաւատարիմ պաշտօնեայք փութով և անօրինակ առատութեամբ կը մատակարարեն իրենց ամենայն տեսակ ... տանջանք։

Մինչդեռ Հայերն այսպէս իրենց ապերախտութիւն կ'ապացուցանեն, Սուլթանն ալ իւր հայրագութ ներողամտութիւնն ցոյց կուտայ ոսկեխառն ներումն շնորհելով մահապարտ երկու Հայոց, Թումաեանի և Գայաեանի։ Միայն թէ հրամայեց որ վտանգէ ազատուած գլուխներն առնուն երթան ի բա՜ց, ի բա՜ց Թրքական սահմաններէն, չիցէ թէ ուրիշներ ալ գլխէ հանեն։ Կայսեր հրամանն չատ բանաւոր է» ո՛վ որ կասէ թէ Թուրքիոյ մէջ կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւն չկայ, թող իւր կին և իւր կեանք և իւր ինչք առնու երթայ ուրիշ երկիր. չա՛տ դիւրին բան, և հետզհետէ ալ կը դիւրանայ, գոնէ ինչքն փոխադրելու խնդիրն, վասն զի ընչեղն ալ անինչ եղած է մեր օրհնեալ երկրին մէջ, և փոխադրութեան ծախք վճարելու տաղտկութենէն ազատ է։

Բայց այս երկրէն դուրս ելնելու խնդիրը վախեմ չափազանց պարզ երևցուցած եղայ։ Խնդիրն բաւական կնճռոտ է։ Բ. Դուռն կ'ուզէ՞ որ Հայերն այս երկրէն դուրս ելնեն թէ ոչ։ Պէտք է ենթադրել թէ կ'ուզէ, քանզի եթէ ալ Հայ չմնայ Թուրքիոյ մէջ, Հայոց խնդիր ալ չի մնար։ Եւ պէտք է ենթադրել նոյնպէս թէ չուզեր, քանզի ամենն չեն ելներ երթար, և երթողներուն ալ շատն կը վերադառնան աւելի զօրացած քսակով և խելքով։ Ուրեմն չերթան աւելի լաւ է ըստ բարեխնամ կառավարութեան, սա չկամիր ամենեւին որ յոռի գաղափարներով մնասուած գլխով վերադառնան ի Տաճկաստան իւր սիրելի հպատակներն։ Անցեալներ հայ էֆէնտի մի կ'ուզէր, բժշկաց խորհրդով, իւր կին Կ. Պոլսէն ի Փարիզ յղել դարմանել տալու համար ախտ մի զոր ապաքինել չէին կրցած մայրաքաղաքիս մասնագէտ բժիշկներն։ Ամբողջ երեք ամիս հարկ եղաւ աշխատիլ, դիմում անել, աղաչել բացատրել պաշտօնէից թէ կինն պիտի երթայր իւր առողջութիւն դարմանել տալու համար։ Տաճկաստանի մէջ բանտ կայ, զայն գիտէք, բայց թէ ամբողջ Տաճկաստան բանտ մ'է այսօր շնորհիւ հայրագորով կառավարութեան, այնմ գուցէ անգէտ էիք. գիտցէք ուրեմն։ Բայց և վստահ եղիք թէ այս ամենն յօգուտ սիրեցեալ հպատակաց, որք տխմար լինելով կրնան մնասուիլ օտար երկրաց մէջ, ճիշդ ինչպէս որ հայր մի իւր տխմար զաւակաց հրաման չտար կասկածելի ընկերաց հետ բարեկամանալ։

Այն գաւառացի Հայերն որք յԱմերիկա գալու համար ճամբայ կ'ելնեն, ինչե՜ր կը կրեն. մարդ կայ որ ճամբէն երկու և մինչև իսկ երեք անգամ ետ դարձուած է, և նորէն ճամբայ ելած է։ Պաշտօնէից բիրտ ձեռքն ամեն տեղ երկաթէ ձողերու պէս դէմ կը կենան, հանգոյն կենդանեաց վանդակի ձողերուն, որուն դէմ խեղճ առիւծն կը քսուի, կը զարնուի և վայրապար կաշխատի դուրս ելնել. կը դառնայ աստին, կը դառնայ անդին, ու ելի աղագս չգտնելով կը մնայ ի վանդակին։ Մեր խեղճ Հայերն միայն մէկ հնար ունին այդ երկաթէ բիրտ ձողերն բանալու, — այն է ոսկիէ բանալի։

Եւ ո՞ւր կ'երթան այս խուսափելու յաջողող Հայերն մեծ մասամբ.—յԱմերիկա։ ոսկւոյ համբաւեալ աշխարհն ուր, կը լսեմք լրագիրներէն թէ, ոսկւոյ սով կայ այժմ, և դրամատունք կը սնանկանան մի գկնի միոյ և կը սնանկացուցանեն հազարաւոր դրամատերներ։ Ինձ անկ չէ այդ վիճակին պատճառներն գտնել. բայց կը կամիմ հարցնել թէ Միացեալ Նահանգաց Հայ պանդուխտներն զո՞հ են գոնէ նիւթապէս. արդարեւ կը շահի՞ն այնքան որ արժէ այնքան նեղութիւն կրել։ Հինգ տարի մնացողներն գոնէ ամերիկացիութեան իրաւունքն շահէին, որ պատուական քան զոսկի է պիտի ասէի եթէ չգիտնայի թէ այս երկրի մէջ ինչքան քիչ կը յարգուին, նոյն իսկ բնիկ Ամերիկացիներ։ Գիտեմ նաև թէ ո՞րքան թոյլ է հոս ամերիկեան դեսպանատունն ամերիկացի Հայերն պաշտպանելու մասին։ Մեք մեր աչք լուսեցինք երբ իմացանք թէ Միացեալ Նահանգաց ներկայացուցիչն ի Կ. Պոլիս ոչ եւս պարզ մինիսթր այլ առաջնակարգ դեսպան պիտի լինի։ Տեսանք զառաջին դեսպան, զպարոն Թըրբլ, և լսեցինք իւր առաջին ատենախօսութիւն Բոպէրդեան վարժարանին տարեկան հանդիսին մէջ, հասկցանք թէ նա ալ միւս մեծ տէրութեանց դեսպաններուն հետ ներդաշնակութեան մէջ է Դրան հետ վարուելու մասին։ Բայց նոքա գոնէ այլ և այլ արտօնութիւններ ձեռք բերելու համար շողոքորթութիւն կը գործածեն իբրեւ գործուած գործի. Ամերկացի՞ն ինչ արտօնութիւն կ'ուզէ որ Պրն. Թըրբլ իւր ճառին մէջ կը յիշէ զՍուլթանն ու կը գովէ նորա փութաջան հոգածութիւնն յօգուտ դաստիարակութեան և կ'ասէ թէ Նորին վեհափառութեան հովանւոյն ներքև կը ծաղկի այս ամերիկեան կրթական հաստատութիւն։ Ի՞նչ հարկ կար որ այդ առթիւ դեսպանն շողոքորթէր զՍուլթանն։ Շողոքորթել է այս, այո՛, քանզի Թըրբլ գիտէ թէ փատիշահն բոլոր այդպիսի վարժարաններ պիտի փակէր վաղն առաւօտ եթէ կարենար։ Եթէ չի փակեր, պարզապէս պատճառն այն է որ չի զօրեր, և ուստի շողոքորթել աւելորդ է։

Շողոքորդել աւելորդ է կ'ասեմ, գիտնալով հանդերձ բան մի զոր գուցէ դուք ալ գիտէք, այսինքն ամերիկայի դեսպանն ու հիւպատոսք այս երկիրն գտնուող Ամերիկացի միսիոնարաց շահերն պաշտպանել իրենց մեծ և գլխաւոր պարտքն կը համարին, և չեն ուզեր որ Հայոց պաշտպան լինելով անհաճոյ լինին Բ. Դրան, չիցէ՞ թէ միսիոնարներուն գործին և հացին արգելք յարուցուի։ դիւանագիտական այս գործիչներու հայեցողութիւնք ճիշդ նման են միսիոնարացն։ Հայոց ինքնօրինութեան ձգտումն ի դիպել առթին պէտք է անհետեթ ցուցնեն որպէս զի թուրք կառավարութիւնն բնաւ չկասկածի թէ միսիոնարք համակիր և ձեռնտու են նոցա այդ մասին։ ԶՊրն. Թումայեան ուսուցչապետն և նորա պաշտօնակից Մարզուանի ամերիկեան գոլէճէն հեռացած, աքսորուած տեսնել յօժար էին քան թէ ոև է աստիճանաւ համակիր երեւիլ յեղափոխական Հայոց։ Ինչ որ քարտուղար Նիւպէռի տեղեկագրեց աննպաստ Թումայեանի, յաւէտ միսիոնարաց երկչոտ տրամադրութենէն ներշնչուելով գրեց։

Ժամանակաւ միսիոնարք կաշխատէին պարզ աւետարան քարոզող կարգ մի անուս մարդիկ արձակել հայ ժողովրդին վերայ. Հայերն պնդեցին և հասկցուցին յետ երկար մրցանաց թէ իրենց ուսում և կրթութիւն պէտք է, Աւետարանն շատ լաւ է, բայց չբաւեր։ Ստիպուած՝ միսիոնարք հիմնարկեցին վարժարաններ ու գոլէճներ, ուր բաղում հայ պատանիք և երիտասարդք ուսումն ու գիտութիւն կը հնարին ուսանիլ թէև կրելով ինչ ինչ կրօնական ձեւակերպութեանց մեղմացեալ լուծն։ Այժմ Հայեր ուրիշ շրջանի մէջ մտեր են. ուսման հետ կ'ուզեն ունենալ նաև տնտեսական և բարոյական և ուսումնական զարգացման պայմաններն.— ազատութիւն, հայկական ինքնավարութիւն։ Ցայսմ եւս միսիոնարք չեն համակրիր Հայոց, բայց ինչպէս եղաւ ուսման համար, նոյնպէս պիտի լինի վերջապէս նաև ազատութեան համար. միսիոնարք պիտի համոզուին իրաց տրամաբանական ընթացիւք թէ Աւետարան, ուսում և ազատութիւն ի միասին պէտք են, և թէ զիրար կը հրաւիրեն, և իրենց պարտք ու փառք պիտի համարին գոնէ գաղտնապէս օգնելու որ Հայք ազատին Թրքին բռնապետութենէն։

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկայ գալ և գործարանաց մէջ չարաչար աշխատիլ հազարաւոր Հայերու բաղդն կամ դժբաղդութիւնն եղած է։ Այսօր այս հեռաւոր երկրի մէջ գտնուող մեր եղբարց որո՞ւն մտքէն կ'անցնէր տասնեհինգ տարի առաջ թէ օր մի ինքն ալ Վարի Աշխարհն պիտի գայր։ Բայց ոմանք եկան, յետոյ աւելի շատեր եկան, և այսպէս կարիճներու մեծ բազմութիւն մի այլ և այլ քաղաքներէ շարժեցաւ դէպ Ամերիկա։ Հարկ չէ կրկնել հոս այն ամեն նեղութիւններն զորս ճանբայ ելնելու օրէն սկսեալ կը կրեն մեր պանդուխտք։ Նախ և առաջ փոխառութիւն անելով ծանր պարտքի և տոկոսի ներքև կ'իյնան. ապա մեծ նեղութիւն կը կրեն թրքական հողէն դուրս ելնելու, և յետոյ դարձեալ նեղութիւն կը կրեն Ամերիկայի հողն մտնելու։ Այնուհետեւ պէտք է նորէն նեղութիւն կրել գործանոց մտնելու համար. բայց Հայու յատուկ համբերութեամբ կը տանին այդ ամեն նեղութեանց և կ'արժանանան գործաւորական չարչարանքին։

Զմեր գործաւորաց վիճակն իմաստ կը ճանաչեմք, և կարող եմք ասել թէ շատ նախանձելի չէ այն։ Թէև շատերն կը յաջողին փոքր դումար մի խնայելու, սակայն շատ զոհողութեան շնորհիւ կը հասնին այդմ։ Զեմք ուզեր կրկնել ինչ որ վերջերս գրեցինք այս մասին, նշանակելով բնական և բարոյական առողջութեան վտանգներն որոց նշաւակ են մեր եղբարք, չմոռնալով հանդերձ արեւելեան պարկեշտ բարուց և ժուժկալութեան սպառնացող ազդեցութիւններն որոց կ'ենթարկուին նոքա։

Կը յիշուի անշուշտ թէ այնուհետեւ ամուսնութեան խնդիրն փոքր մի ծեծեցինք, որմէ երեւան եկաւ թէ մեր պանդուխտներն այս երկրի մէջ ամուսնանալու և կարգ մի չարեաց և զրկողութեանց առջեւն առնելու ճար չունին։

Նախորդ թուով տեսանք թէ մեր եղբարք ամերիկացի քաղաքացութեան իրաւունքն թէև կրնան ձեռք բերել հոս հինգ տարի անընդհատ բնակութենէ ետք, սակայն այդ քաղաքացութիւն իրենց շահ չունի, քանի որ Ամերիկայի կառավարութիւնն շատ թոյլ և անկորով է իւր միջազգային յարաբերութեանց մէջ և իւր հպատակներն ըստ արժանւոյն պաշտպանելու տրամադիր չէ։

Այս պայմանաց մէջ մեր պանդուխտ ներուն առջեւ մէկ պարզ և ուղիղ ճանապարհ կը մնայ— այն է քիչ մի ստակ շահելէ ետք՝ վերադառնալ հայրենիք։ Ամերիկեան քաղաքացի չեղած, այս երկրին ստորին գործաւորաց ցած սովորութիւններովն ու բարուք չթունաւորուած, առողջութիւնն չկորուսած, երիտասարդական ոյժն ու աշխոյժն չսպառած, միայն երեք կամ չորս տարի մնալէ յետոյ վերադառնալ հայրենիք։

Կարելի է այսօր ունի ոք 60 լիրայ, և կը յուսայ թէ տարի մ'ալ մնալով հոս կրնայ 80 ունենալ, ուստի և չուզեր վերադառնալ։ Մեր կարծեօք աւելի լաւ է որ վերադառնայ այս ամառ 60ով քան թէ գալ ամառ 80ով։ Մի թէ վստա՞հ է թէ մինչև գալ ամառ գործ պիտի ունենայ շարունակ։ Դիտուած է թէ հայ պանդուխտն բարոյապէս չապակտնիր ցորչափ շատ դրամ չունի և մինչ մնացած չէ հոս աւելի քան երեք կամ չորս տարի. Անկէ յետոյ է որ աչքերն կը բացուին և կը վարժուին կարգ մի անհաճոյ բաներու և շռայլութեանց։ Ուրեմն այդ ապակտնիչ շրջանն մտնելէ առաջ հայրենիք վերադառնալ՝ թէև համեստ վաստակով՝ շատ աւելի օրհնեալ է քան թէ 20—30 ոսկի աւելի տանիլ ուրիշ չարիքներու հետ խառնուած և անիծուած։

Հայրենիք վերադարձող մեր սիրելի եղբարց բարի ճանապարհ մաղթելով՝ հետեւեալ եղբայրական խրատներն կուտայ «Հայք»։

Նախ, եթէ ամուսնացած չէիր, երբ տուն հասնիս, յարմար տղջիկ մի գտիր ու ԱՄՈՒՍՆԱՑԻՐ։ Աղջիկն լինի գոնէ 17—18 տարեկան, աւելի լաւ է որ 20 տարեկան լինի։ Սերունդդ աւելի առողջ կը լինի և կենակցութիւնն առն ընդ կնոջ իւր ճշմարիտ նշանակութիւնն կ'ունենայ միայն այն պայմանաւ որ կինն կին լինի ոչ

թէ «ճահիլ չոճուխ»։

Երկրորդ, ՁԱՒԱԿԱՑ ՏԷՐ ԵՂԻՐ, և եթէ կարելի է գոնէ չորս զաւակ ունեցիր, բայց եթէ ութ, տասն ունենաս, աւելի լաւ կ'անես։

Մի՛ ասեր թէ շատ դրամ չունիս, ամուսնանալ խոհեմութիւն չէ. քո նախնիք գուցէ քեզ չափ ալ դրամ չունէին, բայց ամուսնացան և ապրեցան իրենք և իրենց զաւակունք ու թոռունք։ Հայաստանի մէջ աղքատ ապրելը վարժուած են մարդիկ շնորհիւ բարեխնամ կառավարութեան։ Առանց զաւակաց աղքատ պիտի ապրիս, աւելի լաւ է որ զաւակօք հանդերձ աղքատ ապրիս։ Երբ ամէն բանէ կողոպտուած եմք, գոնէ մեր նահապետական ողորմութիւններն պահեմք։ Մեծ մեծ ընտանիքներ ստեղծենք։ Հայրենիքն ու Հայ դատն մարդ կ'ուզէ, բազմութիւն կ'ուզէ։ Մէկ կողմէն աշխատիլ պէտք է տղայքն շատցունել, միւս կողմէն կրթել։ Մեր ժամանակաց համար մասնաւորապէս հայրենասիրական գործ կատարած կը լինի առողջ երիտասարդ մի որ առողջ զաւակներ կը ծնանի և հայ տղայոց թիւն բազմապատկելու կը ծառայէ։

Երրորդ, աշխատէ որ նախնեացդ պէս ամուսնանաս և որդիներ ծնանիս բայց նախնեացդ պէս չվարուիս կնոջդ ու զաւակացդ հետ։ ՑԱՐԳԷ ԿԻՆԴ և ՑԱՐԳԷ ՁԱՒԱԿՆԵՐԴ։ Եթէ մի քանի տարի Ամերիկա բնակելով այդ բանն չսովրեցար, շատ բան սովրած չես համարուիր. եթէ կնոջդ հետ յարգանօք վարուիլն քեզ սիրելի և պատուական բարք կը թուի, շատ օգուտ քաղած ես պանդխտութենէդ։ Ուրեմն կինդ սպասաւորի տեղ մի՛ դներ. անոր հետ շատ խօսէ այլ և այլ բաներու վերայ, Ամերիկայի մէջ ինչ կայ և ինչ տեսար լաւ, անոնք պատմէ նմա, անոր հետ խորհրդակցէ, թող նա ալ խորհելու և խորհրդակցելու վարժուի։ Նորա կամքն ալ յարգէ, և ջանա՛ անոր հաճելի լինիլ ոչ թէ ահռելի։ Թող քու օրինակիդ նայելով ամաչեն անոնք որք իրենց կնիկն ծեծելու չափ վայրենի են դեռ։

Տղոցդ հետ ալ շնորքով վարուէ։ Առանց ծեծելու և վախցունելու կրթէ զնոսա։ Գայլն եկաւ, արջն կուգայ՝ և այլ այդպիսի անհոռնի խօսքերով մի՛ վախցուներ պզտիկներն։ Ազատ, համարձակ, անվախ լինելու վարժեցուր զանոնք։ Այդու հանդերձ թող սովրին մաքուր պահել իրենց զգեստներ, ձեռքեր, ոտքեր, եղունգներ, թող սիրեն ջուրն ու լուացուիլն։ Թող սիրեն նաև կարդ կանոն, ժամանակին ուտել, ժամանակին ննջել, ժամանակին խաղալ, ժամանակին կարդալ գրել և դասերն սերտել։ Ծեծէ զիրենք միայն երբ բացարձակ հարկ լինի։

Երթաս բարով, հայ պանդուխտ, երթաս բարով ու հոն մնաս բարով, ամուսնանաս, ուժով, կիրթ, արի ու բարի բազում զաւակներու հայր լինիս։ Տէր ընդ քեզ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՈՍԿՍԼԻ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ

ՆԱՄԱԿ ՑԱՓԱՆՑ ԵՓՐԱՏԱՑ

(Այս նամակ Թուրքիայէն ուղղուած է մէկուն, և սա հաղորդած է մեզ հրատարակելու խնդրանօք։)

Քանի օր առաջ ալ մի քանի հայ բանտարկեալ կային որոնց անունները բոլոր քաղաքացւոց ծանօթէ, ինչպէս նաև ձեզի. սոնք բոլորն ալ չնչին պատճառներով ու յանիրաւի բանտարկուած են, մի քանին համրեմ. Պողոս Գալէնտէրեան, Սարգիս Արքայեան, Կարապետ Թորիկեան և Քէջէճի Ցակոբ, այս վերջինը նոր դնացած էր ու ասոր պատճառաւ Օսկիհան աղա Օսկեհանեան անուն յայտնի խանութպանը (որուն խանութը կառավարութեան խիստ մօտ է և ամբողջ քաղաքացին կը հաւատար թէ Օսկեհան Աղան կառավարութեան բոլոր պաշտօնեաներէն (այսինքն Գայմագամէն, Ղատիէն սկսեալ մինչև հետին ոստիկանը կը սիրուէր), սա ժամը Զի ատեններն կառավարութիւն կերթայ որպէսզի Միւլազիմին աղաչելով Քէջէճի Ցակոբի երաշխաւորէ եւ բանտէն հանէ, դժբաղդ Օսկեհան Աղա երբ ներս կը մտնէ, կը տեսնէ որ միւլազիմը, հեռագրական պաշտօնեայ չաուշ պէքիրը ու մի քանի ոստիկաններ բոլորած օղի կը խմեն. թէև գիշեր ըլլալով մարդ չէր մնացած պաշտօնատան մէջ։ Օսկեհան աղա խորին ակնածանօք կը բարևէ և կ'աղաչէ որ Քէջէճին իւր երաշխաւորութեամբ թողուն այն գիշեր և ուղած ատեննին վերստին իրենց,

Միւլազիմը կըսկըսի հայհոյելով վրան յարձակիլ «օլան կեավուր տէյի՞ միսինիզ էն էյինիզին...»։ Կը հրամայէ որ յիշեալը սոորերկրեայ բանտը միւս Հայերուն քով տանին, ոստիկանք այս հրամանին վրայ ընդոստ կը ցատքեն ու Օսկեհան Աղան ծեծելով քաշկրտելով սանդուղին գլուխը կը տանին և անկից վար կը գլորեն, առանց միջոց տալու որ ինքնին վար իջնէ։

Իրենց նոր սովորութեան համաձայն օրընդմէջ բանտարկեալները կը ծեծեն, դժբաղդաբար ծեծին պահուն հանդիպեցաւ Օսկեհան Աղան ալ. երբ լաւ մը խըմեցին ու դինովցան սկսան բանտարկեալները մէկիկ մէկիկ կանչել, ի՞նչ ընեն խեղճերը, անմռունչ կերթան կարգաւ, ինչպէս ոչխարները անմռունչ սպանդանոց կը դիմեն ու դանակին իրենց վիզը կ'ենթտյեն։ Բանտարկեալք առանց ընդդիմութեան կերթան կը պառկին փորի վրայ ոստիկանաց առջև, ոհ Աստ. իմ ի՞նչ սոսկալի վայրկեաններ։ Մի՛ զարմանար սիրելիս ասոնց հլութեան վերայ, որովհետև որչափ դիմադրեն այնչափ շատ պիտի լինի ծեծը, ոստիկանաց մին գոհին վզին վրայ կը նստի, երկու հատ ալ երկու ոտքերուն վրայ իսկ չորրորդը և հինգերորդը խարազաններով երկու կողմէն կըսկսին զարնել խեղճ անտեր Հայուն ու հարուածներուն հետ աղբի պէս հայհոյանքներ կ'թափեն, ծեծը այնչափ կը տևէ որչափ որ սոքա հոգնելով խարազանները ուրիշի կուտան որ անոնք ծեծեն։ Երբ ծեծը լմննայ կը նստեցնեն խեղճ արարածը ու կը հարցնեն. Սարգիս մենք քեզ ծեծեցի՞նք, մենք քեզի հայհոյնցի՞նք եւ սա ստիպուած է ըսելու ո՛չ գիս չը ծեծեցիք ինծի բան մը չըրիք շնորհակալ եմ. եթէ ասկէ տարբեր բան մը ըսէ ծեծը կրկնուի, և աւելի անդթաբար։

Կրկնապատիկ ճիւաղութիւն մ'ալ, երբ Կարապետն ալ կը ծեծեն նոյնօրինակ եւ կը լմննայ. կը նստեցուներն ու կըսեն «տէ, Կարապե՛տ, պիր թիւրքի չաղը» (Կարապետ, խաղ կանչէ։) Խեղճին աչքէն արցունք և սրտէն արիւն կը հոսի, կերած ծեծէն նստելու անկարող է, ալ ի՞նչ սըրտով խաղ կանչէ։ Երբ ասոնք ծեծ կուտեն, վարի ընկերները լսելով ասոնց աղիողորմ բացագանչութիւնները, զարհուրած կըսկսին լալ. վանդի կարգը իրենց կուգայ հեգհետէ։ Քէջէճին նոյն իրիկուն կըսկըսի լալ թէ՝ փորս կը ցաւի, կը մեռնիմ, հիւանդ եմ, բժիշկ մը բերէք եւ կամ գիս այսօր ծեծէն խնայեցէք» սակայն բոլորովին անլսելի կը մնայ և միւսներէն աստիճան մ'ալ աւելի կը ծեծեն, սա կ'աղաչէ, սրտերնին գրաւելու համար ամէն տեսակ խօսքեր կըսէ եւ ամէնէն վերջը (փատիշահ պաշը իշին օլսուն, տհա ուրմայըն պիր ուրտուղունըզ եէրէ), ասոնք ատոր վրայ «փատիշահըն պաշը եոգտըր» ըսելով, կսկսին հարուածը միեւնոյն տեղին զարնել շարունակ, ի վերջոյ դանակ մը հանելով միւլազիմը կը հրամայէ թէ խարար մը բերէք (կարելի է թէ այս մէկը իբր կատակ ըրած ըլլայ) որ սա Հայը կտրեանք ու մէջը լեցնենք տարէք գետը նետեցէք։ Խեղճ գոհը հաւատալով պառկած տեղացը կը ծռի ու կը նայի թէ այս դժոխային հրամանը պիպի կատարուի՞։ Վերջապէս կը նստեցնեն և ասոր ալ մի և նոյն հարցումները կուղղեն թէ մենք ծեծեցի՞նք ևն....։ Սաստիկ կը սպառնան թէ երբ բանտէն դուրս ելլաք ու մարդու խօսիք ձեզի ըրածներնիս, ձեր վրայ ամբաստանութիւններ պիտի ընենք թէ՝ ասոնք վառօդ կը ծախեն, զէնք կառնեն ևն. ու ձեր թեւերը կապելով Խարբերդ պիտի ղրկեմք, ամենէն վերջը քսակը կառնեն որուն մէջ մի քանի ոսկի կար ու նորէն բանտ կը ղրկեն, թէեւ անկարող էր սանդուղներէն ի վար իջնելու։

Ալ կարգը կուգայ Օսկեհան Աղային, դու լաւ գիտես բարեկամ, թէ ո՛րչափ սորա հետ առևտուր ունին կառավարութեան մարդիկ, միշտ ապառիկ կ'առնեն և շատ անգամ ալ փոխ դրամ, ատով հանդերձ բնաւ չեն խնայեր եւ ամենայն անարգանօք կը կանչեն, սա կաղաչէ կը ծնրադրէ ոտքերնին կը համբուրէ և կաղերսէ, բայց ի զուր, կըսեն թէ դուն կուգաս Հայերը կը պաշտպանես, դուն Հայերուն կողմէն լրտես դրուած ես հոս, անշուշտ դու Գոմիդէի մեծն ես, ըսելով խեղճը կը պառկեցնեն, թէև սա գիրութեան պատճառաւ շատ նեղութեամբ կըրնայ պառկիլ փորի վրայ, կսկսին անխնայ զարնել այնպէս որ զարկած տեղերնին կսկսի 2 մատ բարձրնալ։ Վերջապէս ամենքն ալ փոխ առ փոխ ծեծելով յոգնելէ վերջ կը նստեցնեն մենք քեզի զարկի՞նք եւն. հարցումը ասոր ալ կընեն։

Աստ կըստիպուիմ իմ ամօթխածութիւնս մէկդի թողուլ որովհետև ալ չեմ կրնար համբերել։

Միւլազիմը և փոլիսը կառաջարկեն Օսկեհան Աղային թէ դու շատ գեղեցիկ կին մը ունիս պէտք է որ անմիջապէս հոս բերել տաս...։ բայց կը տեսնան որ անկարելի կը լինի այդ առաջարկը գործադրել տալ, իրենց.... կը բանան ու կըստիպեն որ «սիւննէթի չէրիֆը» համբուրէ- Կուլայ, կայաչէ, բայց իզուր, նեղ մնալով յակամայս կը...։ Բայց ատով ալ չազատիր, գրպանէն քսակը կառնեն որ կը պարունակէր հինգ օսմ. ոսկի և մի քանի ղշ. արծաթ դրամ։ Անկէց վերջ տունը կը ղրկեն, խստիւ պատուիրելով որ ո և է մէկի մը բան մը չըսէ և մէկ մալ Հայու մը չօգնէ։

Հետևեալ օր Օսկեհան Աղա, թէեւ հիւանդ վըճակի մէջ, կը դիմէ առաջնորդարանը և կը բողոքէ։ Յակոբ Վարդապետ Յովիկեան կը խրատէ թէ՝ գնա գայմագամ պէյին բողոքագիր մը տուր որ ես ալ հոն գամ և դատդ տեսնուի։ Սա կը հետևի այս խրատին, բայց ի՞նչ արդիւնք, նորէն կը բանտարկեն եւ այս անգամ կը զրպարտեն թէ, Հայերուն վառօթ և գէնք կը ծախէ և գաղտնապէս բանտարկեալ Հայոց դրամ կը ղրկէ։ Երկու օր բանտը մնալէ ու ծեծուէլէ վերջ, Առաջնորդ Հայրը կը բողոքէ գայմագամին ու կըսէ թէ՝ այս ի՞նչ անիրաւութիւն է կըլլայ։

Գայմագամը զայրացած կըսկսի պոռալ, «Հայե՛ր, ալ ձեր ըրածը չատ եղաւ, ձեզմէ 20—30 մարդ Օսկեհանի պէս շըղթայակապ Խարբերդ պիտի ղրկեմ, դուք ձեր մէջ քսմիդա ունիք»։ Վերջապէս Վարդապետին խնդրանաց վրայ կը խոստանայ թէ վաղը կ'արձակեմ, բայց պէտք է երաշխաւորել որ մէկ մալ ատ տեսակ գործերու մէջ չգտնուիք։ Եւ բուռն ըոտիպմամբ Օսկեհան Աղաի տուած բողոքը ետ առնել տալով նոր մուրհակ մը կառնեն թէ այլ ևս ո և է դատ չունիմ կառաւարութեան դէմ, այսպէսով Օսկեհանի դատն ալ կը վերջանայ։

93 Յունիս 20 ԲԱՐԵԿԱՄԴ

Քաղաքական Ազգային

ԵՒ

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Տէցլի Նիւզի մէջ նամակ մի հրատարակուած է Տաճկաստանէն գրուած, յորում կ'ասէ թղթակիցն.—

«...Մինթ տէրութեանց նախանձին պէտք է զ՞ոհ տրուիմք մեք։ Մինթ Տէր Կլատսթընն չի՞ կրնար դեսպանաժողով մի կոչել և Եւրոպացի ընդհանուր կառավարիչ մի առաջարկել։ Զուիցերիացի, Տանիմարքացի, Հոլանտացի կամ Պելճիքացի մի նախանձ չի յարուցաներ, և շատ լաւ կը լինի։ Աղաչեցէք զՏէր Պրայս պաշտպանել զմեր դատ Տէր Կլատստոնի առջեւ և ասել նմա թէ Սեբաստիոյ և Էնկիւրիի մէջ տեղի ունեցող տանջանք յոռեգոյն են քան զՍպանիական Հաւատաքննութիւնը։...»

Երկու Թիւրք բանտարկեալներ յէնկիւրիւ՝ որք փախչելու ատեն բռնուածէին, յայտարարեցին թէ հայ բանտակեալք յորդորած էին զիրենք պատն ծակել։ Բանտապետն հարցած է անոնց թէ ո՞ր Հայերն թելադրած էին զայդ անել, և նոքա տասըն մարդիկ ցոյց տուին, որք անդէն ուրիշ սենեակ մի տարուեցան և անգթօրէն գան ըմպեցին։ Երբ ո և է մէկն մերժեց խոստովանիլ, մերկացուցին ու գանեցին։ Ոմանք ալ բնականօրէն խոստովանեցան, թէև ես հաւատի եմ թէ փախչել փորձած չէին։ Բանտարկեալքն իսկոյն շղթայակապ եղան և իւրաքանչիւրն կցուեցաւ երկաթէ կամ քարէ գնդի մի։

Հայոց վիճակին նկատմամբ տեղեկութիւն պարունակող լրագրեր չեն կրնար մուտ գտնել Իթուրքիա։ Դիտելի է թէ աւելի պահպանողական քան աղատական թերթեր արգելուած են։

Կ. Պոլսէն Յուլիս 31ին կը հեռագրեն— Ի մահ դատապարտեալ Հայոց տասնին պատիժն Սուլթանի կողմանէ փոխուած է ութ տարուան շղթայակապ աշխատութեան։ Մնացեալ հինգին վերայ որպէս

հասարակ մարդասպանից, մահուան պատիժն ի գործ պիտի դրուի։ Ուրիշ քսան եւ չորս բանտարկելոց բանտարկութեան ժամանակն կարճեցուցուած է։

Յուլիս 29ին, շաբաթ երեկոյ, Հնչակեաններու նախաձեռնութեամբ թափօր կազմեցին Նիւ-Եորքի Հայերէն իբր հարիւր հոգիք, որք դրօշներով եւ նուագախմբով չուեցին 23դ փողոցի եւ 6րդ Պողոտայի անկիւնէն մինչեւ Եունեըն Հրապարակն եւ Ըրդ Պողոտայով վերադարձան ի չուկէտն։ Սպասուածէն աւելի կանոնաւոր եղաւ չուն և բաւական համաքայլ ընթացան, իւրաքանչիւր կարգ երեք հոգիէ բաղկացած լինելով։ Զուոյ բոլոր ընթացքին մէջ գրեթէ ո և է անհաճոյ միջադէպ տեղի չունեցաւ, թէպէտև այնպիսի փոքր թափօրի համար անհաճոյ միջադէպներ հնարաւոր իրաց կարգին մէջ են, մանաւանդ Նիւ-Եորքի նման քաղաքի մէջ ուր լիրբ և անկարգ օտարականներ շատ ստուար թիւ մի կը կազմեն։ Համեստ թափօրն համեստ չափով ուշադրութիւն գրաւեց, և գոնէ ոմանք կարդացին ARMENIANS բառն կարդալ դրօշուն վերայ, թէպէտ անցորդներու անհուն մեծամասնութիւնն այդչափն ալ չիմացաւ, որպէս ստուգեցինք մեք անձամբ առա անդ կանգ առնլով եւ իբրեւ անգէտ ոք հարցանք ոմանց և այլոց թէ արդեօք ինչ չու է այն։ Շատք «չգիտեմք» պատասխանեցին, ոմանք իտալացի են՝ ասացին, և ոմն ալ, որ խորագնին մարդու դէմքով խօսեցաւ մեզ ասաց թէ «Հայ են, Սերպիայէն ու Արմէնիայէն եկած՝ աղքատիկ բազմութիւն։» Հանդիսի սրահն ճոխապէս և ճաշակաւ զարդարեալ էր, և աւուր պատշաճի ատենախօսութիւններ եղան։ Նիւ-Եորքի թերթերէն ոմանք համակրանօք յիշեցին Հայոց այս չուն։ Քաղաքիս պատուաւորագոյն թերթն, ԹՐԻԲԻՒՆ ի մէջ այլոց սա խօսքն գրեց.— «Հնչակն յեղափոխական ընկերակցութիւն մ'է, և անոր անդամք կը յուսան Ամերիկացւոց համակրութիւնն ու օգնութիւնն ձեռք բերել Թուրքիոյ դէմ դնելու համար։»

Պոսթընէն կը գրէ մեզ Տէր Բ. թէ հոն ալ, Լիննէն եկած խմբին հետ միանալով, մեր հայրենակիցք փառաւոր հանդէս մի արած են և տօնած Գում-Գափուի տարեդարձն։

Նոյնպէս կը գրէ Տէր Լ. թէ Լօրէնս քաղաքի Հայեր շատ մեծ աւիւնով և բազմութեամբ տօնած են նոյն տարեդարձն, ատենախօսութիւններ արած են և երգեր երգած։

Լօրէնսի եւ Պոսթընի մէջ հանդէսք հինգշաբթի երեկոյ կատարուեցան, իսկ Նիւ-Եորքի մէջ՝ շաբաթ երեկոյ։

Պոսթընի թերթերն ալ համակրանօք յիշած են Հայոց հանդէսն։

Յունիս 1, 1893

«Հայք»ի քանի մը թիւերը մասնաւորապէս թիւ 10, յատուկ ուշադրութեան առարկայ եղածէ ինծի, սոյն միջոցներ շատ խորհրդաւոր և կրնամ ըսել ազգին փրկութեան միակ ճամբան է, անշուշտ ընդհանուր տեսակէտով ձեր դրութիւն շատ տարբերութիւն չ'ունի Հնչակեաններու դրութենէն, թէև նոքա աւելի ոյժ կուտան առայժմ զօրացունելու Հայաստանի ներքին գաւառները որ ընդհանուր յեղափոխութեան ժամանակ գէթ ժողովուրդը կարող ըլլայ ինքզինք պաշտպանել։ Բայց քանի որ ազգին համար աշխատող տարբեր կուսակցութեանց անկարելի է միանալ, նոյնչափ մեծ դժուարութեանց կենթարկուի ազգին վերակազմնումը։ Թէոր սոյն կուսակցութեանց իրական նպատակն է գործել ազգին համար առանց շահախնդրութեան, պէտք էր որ մինչև հիմա կատարեալ հասկնային թէ իրենց փոքր բաժանեալ խմբառումներովը աւելի կատղեցուցած են դայրացած Թիւրքը ընդդէմ խեղճ Հայուն, ուստի չենք կրնար մեղադրել ի Հայաստան և ուրիշ երկիրներ գըտնուող մեծ և խելացի Հայեր որ բոլորովին լուռ կը մնան. զի չկայ մասնաւոր կեդրոն մը որուն իրենց ոյժը, խելքը կամ ստակը տան մինչդեռ սորա հակառակ եթէ սա բաժան կուսակցութիւնք ի մի ձուլուին մի կեդրոն ունենալով, այն ատեն չէ թէ միայն ոյժերը կը շատնան եւ իրական ու վստահելի կերպարանք մը կ'առնեն, այլ սոյն միացեալ կեդրոնն կրնայ հրաւիրել իրեն՝ աշխարհի Հայ դիւանագէտներ, Հայ զօրապետներ, Հայ դրամատեարք, որոց խորհրդովն ու աջակցութեամբն կրնայ կազմուիլ Հայկական շօշափելի զօրութիւն։ Մենք Եւրոպիոյ աջակցութիւնն ու միջամտութիւնն միայն այն պարագային տակ պիտի ունենանք երբ զէնք եւ սուր

ի ձեռին մեր ազատութեանը համար ա-
ռիւն թափենք. թէև լուռ ու մունջ կեր-
պով 1000աւորք աքսորուին կամ բանտար-
կութեամբ մեռնին, ատոր հետևանք ու-
րիշ բան չէ եթէ ոչ Եւրոպիոյ մի՛ բողոք,
և ուրիշ քանի մը լրագրերու մէջ նորա
արձագանք։ Ուստի, Հայե՛ր, միանալու և
գործելու ժամանակ է. հազուագիւտ պա-
տեհութիւն մը որոյ կորուստը կրնայ յա-
ւիտենական ըլլալ. և թող մեր աս կու-
սակցութեանց պետերը խորհին թէ աս
խեղճ ու անկեղծ ժողովուրդը որ իրենց
ինչք ու անձ կը զոհեն ազատութեան սի-
րոյն համար, երկար ատեն չեն կրնար տո-
կալ աս վիճակին մէջ։ ՀՆՉԱԿԵԱՆ ՈՄՆ

Պրայթընէ կը գրէ Տ. Կ. Պ., Ցուլիս 19ին։

Ցաւալի լուր մը հաղորդելու հարկին
ներքև կը գտնուիմ։

Քանի մը ամիս առաջ ծանօթացայ հա-
մակրելի եւ տաղանդաւոր երիտասարդի
մը, Պրն. Խորէն Անդրէասեանի հետ որ
Խարբերդի գալէֆին փայլուն տաներէն մին
էր և մօտ ազգական էնֆիրընճեաններու։
Պրն. Խորէն Անդրէասեան տարի մը առաջ
Ամերիկա եկած էր և վեց ամիսէ ի վեր
Պոսթոն տպարանի մը մէջ կաշխատէր։
Ասկէ երկու շաբաթ առաջ տկար ըլլալուն
գործի չէր երթար, բայց վտանգաւոր հի-
ւանդութիւն մը չէր տեսնուիր վրան։
Սակայն քանի մը օր առաջ Ուսթըր գացած
ըլլալուս բացակայութեանս միջոցին հի-
ւանդութիւնը ծանրանալով ստիպուած է
քաղաքիս հիւանդանոցը երթալ եւ այսօր
վերադարձիս լսեցի թէ այս առաւօտ մե-
ռած է հիւանդանոցին մէջ։

Շիքակոյէն կը գրէ Տ. Ա. Ց. Ս.

«Հայք»ի 10 թուոյ ամուսնութեան
առթիւ հրատարակած յօդուածներ բաւա-
կան հետաքրքրութիւն յարոյց տեղւոյս
հայերու մէջ, և անցեալ կիրակի հայկա-
կան ժողովոյ մէջ վիճաբանութեան նիւթ
ըրինք։ Հայերու աստ ամուսնութիւնն վը-
նասակար լինելն ինձ տրուած էր պաշտ-
պանել, իսկ միւս կողմն ալ թէպէտև կան-
խաւ անձի մը տրուած էր. սակայն այդ
անձ Նիւ-Եորք գալուն, նորա փոխանոր-
դաբար Պ. Ս. Սելեան փաստաբանեց. հա-
կառակ կողմն միայն 2 անձեր գտնուեցան
խոսողներ, իսկ մեր կողմ մինչ 10—12խո-
սողներ եղան չատեր նոյնիսկ 2—3 անգամ
խոսեցան։ Վերջապէս խիստ տաք վիճա-
բանութիւն մը ունեցանք և 2դէմ 12ով ո-
րոշեցինք թէ հայոց աստ ամուսնանալն ա-
ւելի վիճակին վատթարացուցել է քան
ազնուացուցել, նամանաւանդ ամենազօ-
րագոյն փաստն հոն կայացաւ թէ երիտա-
սարդաց աստ ամուսնութիւնք պարզապէս
հայ ազգի նուազման ու կորստեան գլխա-
ւոր պատճառներ են։

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հայ
հասարակութեան թէ առանց քարի, և միան-
գամայն մաքուր ու ընտիր պուլղուր կը վաճա-
ռենք, փաունտը 8 սենթի միայն, կանխիկ վը-
ճարելի։

Նիւ Եորքի եւ ծէրզիի հայերն եթէ 25
փաունտէ աւելի գնելու լինին փոխադրութեան
ծախքը մենք յանձն կառնունք վճարել։ Իսկ
ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնու-
ազն 50 փաունտ գնելու են փոխադրութեան
ծախքէ ազատ մնալու համար։

Փորձեցէք մեզ և զոհ պիտի ըլլաք։

H. KOURKJIAN & S. HAUVSEPIAN
BERGENLIN AVE. COR. Humboldt st.
UNION HILL N. J.




SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՆԻՒՆԵՐ

Այնպէս կը նորոգենք որ նորի պէս կ'երևի
և կը վաճառենք այն գնով որ մեզի արժած է՝
վասն զի չենք ուզեր գալ եղանակին պահել
զայնս։ Հեծելանիւներն կրնաք հոս գործածել
և ապա տանել ձեր սիրելի հայրենիքն։

Լ. Մ. Ալեքսանդր, L. M. Alexander
191 Front st. worcester Mass.

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՑՐՆԵՐ, աժան եւ
պատուական պիտի գտնէք մեր խանու-
թն, հատն 20, 25, 30, սենթի։ Նաեւ պա-
տի թուղթ։ Հրամեցէք ի

250 Main ST. (Մէյն փողոց)
WORCESTER MASS.
Ֆրանք Հօէի մթերանոցն

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվընիու — Նիւ Եորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. — Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Յակոբ Էքիզեան — Կարապետ Էքիզեան
30 Eddy street — 28 South Margin Street
Providence R. I. — U. S. A. — Boston Mass.

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան — Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միայն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերըն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկիր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր չրջականերումն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր. 50ս.
Բ. տարի 2տոլար կամ 10 Ֆրանք

ԲԺԻՇԿ ԿՈՆԻԿՈՎ

Պատիւ ունի յայտարարել Պօսթընի հայ հասարակութեան, որ ինքն բժշկական ուսումն աւարտած ըլլալով Զուիցերիոյ մէջ և ժամանակ մի Փարիզ բժշկուանելէն յետոյ եկած Ամերիկայ և Պօսթըն հաստատուած է, շատ հմուտ է վարակիչ ախտեր բժշկելու մէջ, ու իր պաշտօնատեղին կը գտնուի

361 Harrison Avenue

Office hours; 8—10 A. M. 1—3 & 5—7 P. M.

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ

60 Front St. — Worcester, Mass.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութրանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց չրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ Ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 Ֆրանք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ 1554 B. Way. 46 և 47 Փողոցներուն միջեւ

Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի) ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց ևս որք կ՚ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանաց հարազատութեան և թէ գնե րու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

Նաև փոքր գոմսիոնով ոև է Թրքական ապրանք կը գնէ ու կը յղէ յանձնարարողաց այլ և այլ նահանգներ, և այսպէս ճամբու ծախքեր խնայել կուտայ մեր վաճառականաց:

PATENTS — HOPKINS & ATKINS washington, D. C. 20 years' experience write for informatian

---

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերայիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըըպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ
Րանտօլ

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր ամսոց կէսէն հաշուելով:

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,

385 Main St. Worcester, Mass.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մը, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ